**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**
**ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ**
**ՏՆՕՐԵՆ**

№ ՏԾԻԳ - 38

«02» 02 2015թ.

«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի
շրջանակներում գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայություն: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԳԱԿ-ԾՀԾՁԲ-11/3-ՏԿՆ-15/1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ոչ ուշ, քան 2015 թվականի փետրվարի 12-ը, 16:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Հասմիկ Օրդուխանյանը:

Հայտերը կբացվեն կայքի միջոցով 2015 թվականի փետրվարի 12-ին, 16:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N307 սենյակ հասցեում:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերումը, որոնք խմբավորված են 5 (հինգ) չափաբաժինների՝

| *Չափա-բաժինների համարները* | *Չափաբաժնի անվանումը* |
|---|---|

| | |
|---|---|
| 1 | ՎԱԶ 21104 տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում |
| 2 | ՎԱԶ 21214 տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում |
| 3 | ՎԱԶ 2107 տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում |
| 4 | AUDI A6 1.8 տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում |
| 5 | KIA OPTIMA տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում |

*Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:*

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցը պետք է ներառված լինի տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման համար «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագիր կնքած անձանց ցուցակում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

2) «Ֆինանսական չափորոշիչ».

բ. գնային առաջարկ՝ Հավելված N 2, կցելով՝ Հավելված N 2.1-ը: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Բավարար է գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտը, հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում 5 օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն իրավերով (ծանուցմամբ) նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով (գնման էլեկտրոնային եղանակ) սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hordukhanyan@transportpiu.am:

Հարգանքով՝

Է. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատարող*
*Գնումների և պայմանագրերի*
*կառավարման բաժին՝ Հ.Օրդուխանյան*
*հեռ. 58-05-23*